

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՀՀ կենտրոնական բանկի համար ցանցային տեսագրիչներ և ցանցային տեսախցիկներ ձեռք բերելու նպատակով կազմակերպության ընտրության բաց մրցույթ կազմակերպելու մասին

Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկը կազմակերպում է բաց մրցույթ՝ ՀՀ կենտրոնական բանկի կարիքներն ապահովելու համար ցանցային տեսագրիչներ և ցանցային տեսախցիկներ ձեռք բերելու նպատակով կազմակերպություն ընտրելու համար:

Բաց մրցույթին կարող են մասնակցել Հայաստանի Հանրապետության և օտարերկրյա իրավաբանական և ֆիզիկական անձինք, որոնք բավարարում են սույն հայտարարությամբ և հրավերով սահմանված որակավորման չափանիշներին և ունեն գնման պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարման համար պահանջվող իրավունք, տեխնիկական և ֆինանսական միջոցներ:

Բաց մրցույթին մասնակցել ցանկացող անձինք պետք է բավարարեն հետևյալ պահանջներին՝

Մասնակիցը պետք է ունենա պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարման համար հրավերով պահանջվող՝

- 1) մասնագիտական գործունեության համապատասխանություն պայմանագրով նախատեսված գործունեությանը.
- 2) մասնագիտական փորձառություն.
- 3) տեխնիկական միջոցներ.
- 4) ֆինանսական միջոցներ.
- 5) աշխատանքային ռեսուրսներ:

Հայտերն անհրաժեշտ է ներկայացնել թղթային ձևով, Հայաստանի Հանրապետություն կենտրոնական բանկ՝ ք. Երևան 0010, Վազգեն Սարգսյանի փողոց 6 հասցեով:

Հայտերը պետք է ներկայացվեն հայերեն լեզվով:

Մասնակիցները կարող են իրենց հայտերը ներկայացնել մինչև 2019թ. նոյեմբերի 14-ը, ժամը 16:00 «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկ» ք. Երևան 0010, Վազգեն Սարգսյանի փողոց 6 հասցեով:

Հայտերի բացման նիստը անց է կացվելու ՀՀ կենտրոնական բանկում՝ ք. Երևան 0010, Վազգեն Սարգսյանի փողոց 6 հասցեով, 2019թ. նոյեմբերի 14-ին, ժամը 16:00:

Մրցույթի արդյունքների ամփոփման նիստը հրավիրվում է 2019թ. նոյեմբերի 21-ին ժամը 16:00:

Մրցույթին մասնակցելու հրավերը հրապարակված է Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի ինտերնետային WEB կայքում (www.cba.am): Մրցույթին մասնակցելու հրավերը, ինչպես նաև լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար ցանկացողները կարող են դիմել Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի Ներքին ծառայությունների վարչություն, հեռ. 59-28-02, 59-28-05 ներքին՝ 18-02, 18-05, mail – galust.galstyan@cba.am:

Հասարակայնության հետ կապերի ծառայություն

ՀՀ կենտրոնական բանկի համար ցանցային տեսագրիչներ և ցանցային տեսախցիկներ ձեռք բերելու նպատակով կազմակերպության ընտրության բաց մրցույթի մասնակցության հրավեր

1. ԲԱՅ ՄՐՑՈՒՅԹԻ ԱՆՑԿԱՑՄԱՆ ՆՊԱՏԱԿԸ ԵՎ ԳՆՄԱՆ ԱՌԱՐԿԱՅԻ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

1.1 Սույն բաց մրցույթը (այսուհետև՝ Մրցույթ) կազմակերպվում է Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի կարիքներն ապահովելու համար Լոտ 1՝ ցանցային տեսագրիչներ և Լոտ 2՝ ցանցային տեսախցիկներ ձեռքբերելու նպատակով կազմակերպություն ընտրելու համար:

1.2 Սույն հրավերը տրամադրվում է ի լրումն Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի (այսուհետև՝ Պատվիրատու) կարիքներն ապահովելու համար Լոտ 1՝ ցանցային տեսագրիչների և Լոտ 2՝ ցանցային տեսախցիկների ձեռքբերման բաց մրցույթի (այսուհետև՝ Մրցույթի) հայտարարության:

1.3 Ձեռքբերվող Լոտ 1՝ ցանցային տեսագրիչների և Լոտ 2՝ ցանցային տեսախցիկների ձեռքբերման բնութագրերը, քանակները ներկայացված են հավելված 2-ով:

1.4 Մասնակիցը կարող է հայտ ներկայացնել ինչպես մեկ լոտին, այնպես էլ բոլոր լոտերին մասնակցելու համար:

1.5 Սույն մրցույթի անցկացման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են սույն հրավերով, ինչպես նաև «Գնումների մասին» ՀՀ օրենքով:

2. ՄՐՑՈՒՅԹԻ ՀԱՅՏԵՐԻ ՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԿԱՐԳԸ

2.1 Մրցույթին մասնակցելու համար մասնակիցը (այսուհետև՝ Մասնակից) Պատվիրատուին ներկայացնում է մրցույթի հայտ (այսուհետև՝ Հայտ): Մրցույթի հայտը սույն հրավերի հիման վրա մասնակցի կողմից ներկայացվող առաջարկն է:

2.2 Մասնակիցը չի կարող նույն մրցույթին ներկայացնել մեկից ավելի հայտ, բացառությամբ սույն հրավերի 5-րդ գլխով նախատեսված հայտի փոփոխում ներկայացնելու դեպքի:

2.3 Մրցույթի հայտով ներկայացվող տեղեկությունները և փաստաթղթերը ներկայացվում են փակ և սոսնձված ծրարով: Ծրարը և սույն հրավերով նախատեսված՝ մասնակցի կողմից կազմված փաստաթղթերը ստորագրում է դրանք ներկայացնող անձը կամ վերջինիս կողմից լիազորված անձը (այսուհետև՝ գործակալ): Եթե մրցույթի հայտը ներկայացնում է գործակալը, ապա հայտով ներկայացվում է վերջինիս այդ լիազորությունը վերապահված լինելու մասին փաստաթուղթ:

2.4 Սույն հրավերի 2.3. կետում նշված ծրարի վրա պետք է հայտը կազմելու լեզվով նշվի՝

1. «ՀՀ կենտրոնական բանկ, ք. Երևան, Վ. Սարգսյան 6» բառերը.
2. **«տեսագրիչներ և տեսախցիկներ» բառերը.**
3. «ՄՐՑՈՒՅԹԻ ՊԱՅՄԱՆՆԵՐ» բառերը.
4. «ՉԲԱՑԵԼ ՄԻՆՉԵՎ ՄՐՑՈՒՅԹԻ ՀԱՅՏԵՐԻ ԲԱՅՄԱՆ ՆԻՍՏԸ» բառերը.
5. մասնակցի անվանումը, գտնվելու վայրը և հեռախոսահամարը:

2.5 Սույն հրավերի 2.3. կետում նշված ծրարը պետք է պարունակի՝

1. Մասնակցի կողմից ներկայացրած փաստաթղթերի ցանկ,
2. Գնային առաջարկ, որը պետք է լինի ֆիքսված, ոչ գործոնային և իր մեջ ներառի ՀՀ կենտրոնական բանկի հասցնելու հետ կապված բոլոր տեսակի ծախսերը և հարկերը, այն պետք է ներկայացվի ՀՀ դրամով, լինի ոչ գործոնային
3. Վճարման պայմանները (կանխավճարի դեպքում պարտադիր է բանկային երաշխիք, վճարումների կատարման կարգը), և հնարավոր զեղչերի կիրառման (գնային) քաղաքականությունը:
4. Մատակարարման ժամկետները մինչև 25.12.19թ.
5. Երաշխիքային սպասարկման ժամկետ՝ առնվազն 1 տարի
6. Իր իսկ կողմից ստորագրված և կնքված տեղեկանք նախկինում այլ կազմակերպությունների հետ նմանատիպ ծառայությունների գծով համագործակցության մասին,
7. Տեղեկանք ՀՀ հարկային մարմնից գործունեության վերջին ժամանակահատվածում և տվյալ պահին մասնակցի ՀՀ պետական բյուջեի նկատմամբ ունեցած պարտավորությունների վերաբերյալ,
8. Մասնակցի պետական ռեզիստորի կողմից տրված վկայականի պատճեն:

9. Իր իսկ կողմից ստորագրված և կնքված հայտարարություն այն մասին, որ մասնակիցը համապատասխանում է սույն հրավերի 6-րդ կետով սահմանված որակավորման չափանիշներին:
10. Հայտի ապահովումը հավաստող փաստաթղթի առկայություն (սույն հրավերի 8-րդ մաս):
11. Իր իսկ կողմից ստորագրված և կնքված տեղեկանք այն մասին, որ դատական կարգով սնանկ ճանաչված չէ, լուծարման գործընթացում չի գտնվում:
12. Իր կողմից հաստատված հայտարարություն՝ սույն ընթացակարգի շրջանակում գերիշխող դիրքի չարաշահման և հակամրցակցային համաձայնության բացակայության մասին
13. Իր կողմից հաստատված հայտարարություն՝ սույն ընթացակարգի շրջանակում իրեն փոխկապակցված անձանց և (կամ) իր կողմից հիմնադրված կամ ավելի քան հիսուն տոկոս իրեն պատկանող բաժնեմաս (փայաբաժին) ունեցող կազմակերպությունների միաժամանակյա մասնակցության բացակայության մասին,
14. այն ֆիզիկական անձի (անձանց) տվյալները, ով ուղղակի կամ անուղղակի ունի մասնակցի կանոնադրական կապիտալում քվեարկող բաժնետոմսերի (բաժնեմասերի, փայերի) ավել քան տաս տոկոսը, ներառյալ ըստ ներկայացնողի բաժնետոմսերը, կամ այն անձի (անձանց) տվյալները, ով իրավունք ունի նշանակելու կամ ազատելու մասնակցի գործադիր մարմնի անդամներին, կամ ստանում է մասնակցի կողմից իրականացվող ձեռնարկատիրական կամ այլ գործունեության արդյունքում ստացված շահույթի տասնհինգ տոկոսից ավելին: Սույն ենթակետում մեջ նշված անձանց բացակայության դեպքում ներկայացվում է գործադիր մարմնի ղեկավարի և անդամների տվյալները
15. 2018թ.-ի հարկային տեսչություն ներկայացվող ֆինանսական հաշվետվությունների ամբողջական փաթեթը, (իսկ վերջինիս բացակայության դեպքում՝ ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն, համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվություն կամ շահույթ/վնասի հաշվետվություն, սեփական կապիտալի շարժի մասին հաշվետվություն, դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվություն):

3. ՄՐՑՈՒՅԹԻ ՀԱՅՏԵՐԻ ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

- 3.1 Մրցույթի հայտերն անհրաժեշտ է ներկայացնել Պատվիրատուին առձեռն կամ փոստային ծառայության միջոցով՝ պատվիրված նամակով:
- 3.2 Մասնակցի պահանջով Քարտուղարը մասնակցին տրամադրվում է համապատասխան տեղեկանք՝ մրցույթի հայտն ընդունելու մասին, որում նշվում է՝ մասնակցի անվանումը (մասնակցի ցանկությամբ ծածկանունը), հայտի ընդունման տարին, ամիսը, ամսաթիվը, ժամը, հայտը ընդունող աշխատակցի անունը, ազգանունը և պաշտոնը:
- 3.3 Պատվիրատուն պատասխանատվություն չի կրում փոստով ուղարկված մրցույթի հայտերի՝ վերջնական ժամկետից ուշ կամ բացված տեսքով կամ այլ կերպ վնասված ստանալու համար:
- 3.4 Գնմանը վերաբերող փաստաթղթերը կազմվում են հայերեն:
- 3.5 Մրցույթի մասնակիցները մինչև մրցույթի հայտերը ներկայացնելու վերջնական ժամկետի ավարտը, կարող են փոփոխել կամ հետ վերցնել մրցույթի հայտերը (հրաժարվել մրցույթին մասնակցելուց): Մրցույթի հայտի փոփոխությունը կատարվում է սույն հրավերով մրցույթի հայտ ներկայացնելու համար նախատեսված կարգով՝ համապատասխան ծրարի վրա ավելացնելով «փոփոխում» բառը: Մրցույթին մասնակցելուց հրաժարվելու դեպքում այդ մասին ծանուցումը կարող է ուղարկվել նամակով կամ ֆաքսով:

4. ՄՐՑՈՒՅԹԻ ՀԱՅՏԵՐԻ ԲԱՑՄԱՆ ԵՎ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ԱՄՓՈՓՄԱՆ ՕՐԸ, ՎԱՅՐԸ ԵՎ ԺԱՄԸ

- 4.1 Մրցույթի հայտերի բացումը կկատարվի մրցույթի հանձնաժողովի նիստում՝ 2019թ. նոյեմբերի 14-ին ժամը 16:00-ին, ք.Երևան, Վ. Սարգսյան 6 հասցեում:
- 4.2 Մրցույթի արդյունքների ամփոփման նիստը հրավիրվում է ս.թ. 2019թ. նոյեմբերի 21-ին ժամը 16:00:
- 4.3 Մրցութային հանձնաժողովը մրցույթի հայտերի բացման օրը մրցույթի մասնակիցների ներկայացրած հայտերի ուսումնասիրությունից հետո կարող է փոփոխել հրավերով նախատեսված մրցույթի հայտերի ամփոփման օրը և ժամը, դրա մասին ծանուցելով մասնակիցներին:

5. ՀՐԱՎԵՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼԸ ՀՐԱՎԵՐԻ ՊԱՐԶԱԲԱՆՈՒՄՆԵՐԸ

- 5.1 Մրցույթի հրավերի պայմաններում, ինչպես նաև մրցույթի հայտերը բացելու օրվա և ժամի վերաբերյալ փոփոխություններ կատարելու անհրաժեշտության դեպքում ՀՀ կենտրոնական բանկը կատարում է համապատասխան

փոփոխություններ և (կամ) լրացումներ հրավերում (այսուհետ՝ հրավերի փոփոխություն)՝ սակայն ոչ ուշ, քան մրցույթի հայտերի ներկայացման վերջնաժամկետը լրանալու հինգ օրացուցային օր առաջ:

5.2 Հրավերի փոփոխություն կատարելու դեպքում մասնակիցներն իրավունք ունեն սույն հրավերով սահմանված կարգով մրցույթային հայտերում կատարել փոփոխություններ: ՀՀ կենտրոնական բանկը հրավերի պայմանների փոփոխության դեպքում չի կրում մասնակիցների կողմից կրած վնասների ռիսկը:

5.3 Մասնակիցն իրավունք ունի հայտերի ներկայացման վերջնաժամկետը լրանալուց առնվազն հինգ օրացուցային օր առաջ Պատվիրատուից պահանջելու հրավերի պարզաբանում:

Հարցումը կատարած մասնակցին պարզաբանումը տրամադրվում է գրավոր՝ հարցումն ստանալու օրվան հաջորդող երկու օրացուցային օրվա ընթացքում:

Պարզաբանում չի տրամադրվում, եթե հարցումը կատարվել է սույն հոդվածով սահմանված ժամկետի խախտմամբ, ինչպես նաև, եթե հարցումը դուրս է հրավերի բովանդակության շրջանակից:

6. ՄՐՑՈՒՅԹԻ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ և ԴՐԱՆՑ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԿԱՐԳԸ

6.1 Մրցույթին կարող են մասնակցել Հայաստանի Հանրապետության և օտարերկրյա ցանկացած իրավաբանական և ֆիզիկական անձինք, որոնք բավարարում են սույն հրավերով սահմանված որակավորման չափանիշներին և ունեն գնման պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարման համար պահանջվող իրավունք, տեխնիկական և ֆինանսական միջոցներ:

6.2 Սույն հրավերով նախատեսված մրցույթին մասնակցելու իրավունք չունեն անձինք՝

- որոնք դատական կարգով ճանաչվել են սնանկ,
- որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունեն իրենց ներկայացրած գնային առաջարկի մինչև մեկ տոկոսը, բայց ոչ ավելի, քան հիսուն հազար Հայաստանի Հանրապետության դրամը գերազանցող ժամկետանց պարտավորություններ,
- որոնք կամ որոնց գործադիր մարմնի ներկայացուցիչը հայտը ներկայացնելու օրվան նախորդող երեք տարիների ընթացքում դատապարտված է եղել ահաբեկչության ֆինանսավորման, երեխայի շահագործման կամ մարդկային թրաֆիքինգ ներառող հանցագործության, հանցավոր համագործակցություն ստեղծելու կամ դրան մասնակցելու, կաշառք ստանալու, կաշառք տալու կամ կաշառքի միջնորդության եւ օրենքով նախատեսված տնտեսական գործունեության դեմ ուղղված հանցագործությունների համար, բացառությամբ այն դեպքերի, երբ դատվածությունը օրենքով սահմանված կարգով հանված կամ մարված է
- որոնց գործադիր մարմնի ներկայացուցիչը հայտը ներկայացնելու պահին նախորդող երեք տարիների ընթացքում դատապարտված է եղել տնտեսական գործունեության կամ պետական ծառայության դեմ ուղղված հանցագործության համար, բացառությամբ այն դեպքերի, երբ դատվածությունը օրենքով սահմանված կարգով հանված կամ մարված է.
- որոնց վերաբերյալ հայտը ներկայացվելու օրվան նախորդող մեկ տարվա ընթացքում առկա է օրենքով սահմանված կարգով կայացված անբողոքարկելի վարչական ակտ՝ գնումների ոլորտում հակամրցակցային համաձայնության կամ գերիշխող դիրքի չարաշահման համար.
- որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են Եվրասիական տնտեսական միությանն անդամակցող երկրների գնումների մասին օրենսդրության համաձայն հրապարակված գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում.
- որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե՝
 - ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,
 - բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,
 - գ. հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

7. ՀԱՅՏԵՐԻ ԲԱՑՈՒՄԸ, ԳՆԱՀԱՏՄԱՆ և ՄՐՑՈՒՅԹԻ ՀԱՂԹՈՂԻ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԸ

7.1 Մրցույթի հայտերի բացման նիստում մրցույթի հանձնաժողովը գնահատում է՝

- մրցույթի հայտեր պարունակող ծրարները կազմելու և ներկայացնելու համապատասխանությունը սույն հրավերով սահմանված կարգին և բացում համապատասխանող գնահատված հայտերը՝ առաջարկները պարունակող ծրարները.
- բացված յուրաքանչյուր ծրարում մրցույթի հրավերով պահանջվող (նախատեսված) փաստաթղթերի առկայությունը, յուրաքանչյուր Մասնակցի փաստաթղթերի կազմման համապատասխանությունը մրցույթի հրավերով սահմանված պայմաններին:

7.2 Մրցութային հանձնաժողովի որոշմամբ մասնակցի հայտը մերժվում է, եթե՝

- մասնակիցը չի համապատասխանում սույն հրավերի 6-րդ կետով սահմանված պահանջներին,
- մրցութային հայտը չի համապատասխանում սույն հրավերով սահմանված պահանջներին:

7.3 Մրցույթի հաղթողին որոշելու նպատակով մրցույթի հրավերով սահմանված կարգով համեմատվում են բավարար գնահատված հայտերը: Բավարար գնահատված հայտերից մրցույթում հաղթող է ճանաչվում առավել բարձր գնահատական ստացած առաջարկը: Առաջարկը գնահատելիս, առաջարկվող գնից բացի հաշվի են առնվում Մրցութային հանձնաժողովի սահմանած ոչ գնային այլ չափանիշներ:

7.4 Մրցույթի հայտերի ամփոփման նիստում որոշվում են նաև մրցույթում 2-րդ և հաջորդական տեղերը զբաղեցրած Մասնակիցները:

7.5 Մրցույթի հայտերի գնահատման նպատակով մրցութային հանձնաժողովը կարող է Մասնակիցներից պահանջել բացատրություններ (պարզաբանումներ): Ընտրված մասնակցից կարող է նաև պահանջվել վերահաստատել որակավորման իր հատկանիշները: Եթե ընտրված մասնակիցը չի ներկայացնում սույն կետում նշված գրավոր հայտարարությունը, ապա նրա մրցույթի հայտը մերժվում է և մրցույթի հայտի ապահովումը չի վերադարձվում: Նման դեպքում կազմվում է արձանագրություն՝ նշելով մրցույթի հայտի մերժման հիմքը:

Բացատրություններ ստանալու և (կամ) վերահաստատման շրջանակներում չեն կարող փոխվել մրցույթի հայտով ներկայացված փաստաթղթերը և (կամ) պահանջվել և (կամ) ներկայացվել մրցույթի հրավերով չնախատեսված փաստաթղթեր:

7.6 Մասնակիցները և նրանց ներկայացուցիչները կարող են ներկա գտնվել Մրցույթի հանձնաժողովի նիստերին: Նրանք կարող են պահանջել մրցույթի հանձնաժողովի նիստերի արձանագրությունների պատճենները:

7.7 Հայտերի գնահատման ընթացքում, եթե մրցույթի հայտում անհամապատասխանություն է տեղ գտել տառերով և թվերով գրված գումարների միջև, ապա հիմք է ընդունվում տառերով գրված գումարը:

8. ՄՐՑՈՒՅՑԻ ՀԱՅՏԻ և ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՊԱՀՈՎՈՒՄԸ

8.1 Մասնակիցը հայտով՝ հրավերով սահմանված պահանջով ներկայացնում է հայտի ապահովում, որի չափը հավասար է հայտով առաջարկվող գնի երեքից հինգ տոկոսին: Հայտի ապահովումը ներկայացվում է միակողմանի հաստատված հայտարարության՝ տուժանքի կամ բանկային երաշխիքի կամ կանխիկ փողի ձևով: Կանխիկ փողի ձևով ներկայացված հայտի ապահովումը պահվում է լիազոր մարմնի անվամբ բացված գանձապետական հաշվում:

8.2 Մասնակիցը վճարում է հայտի ապահովումը, եթե նա՝

- 1) հայտարարվել է ընտրված մասնակից, սակայն հրաժարվում կամ զրկվում է պայմանագիր կնքելու իրավունքից.
- 2) խախտել է գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորություն, որը հանգեցրել է գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը.
- 3) հայտերի բացումից հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

8.3 Մրցույթի հրավերում փոփոխություններ կատարվելու դեպքում մրցույթի հայտեր ներկայացրած Մասնակիցները պարտավոր են անհրաժեշտության դեպքում երկարաձգել իրենց ներկայացրած մրցույթի հայտի ապահովման գործողության ժամկետը, կամ ներկայացնել մրցույթի հայտի նոր ապահովում Հակառակ դեպքում մրցույթի հայտը մերժվում է:

8.4 Պայմանագրի ապահովում ներկայացնելու պահանջի հիման վրա այն ստանալու օրվանից 10 աշխատանքային օրվա ընթացքում ընտրված մասնակիցը պարտավոր է ներկայացնել պայմանագրի ապահովում: Ընտրված մասնակցի հետ պայմանագիր կնքվում է, եթե վերջինս ներկայացնում է պայմանագրի ապահովում:

8.5 Պայմանագրի ապահովման չափը կազմում է պայմանագրի գնի 10 տոկոսը: Պայմանագրի ապահովումը ներկայացվում է ընտրված մասնակցի կողմից միակողմանի հաստատված հայտարարության՝ տուժանքի կամ կանխիկ փողի կամ բանկային երաշխիքի ձևով: Կանխիկ փողի ձևով ներկայացված պայմանագրի ապահովումը պահվում է լիազոր մարմնի անվամբ բացված գանձապետական հաշվում:

8.6 Պայմանագրով պատվիրատուի կողմից կանխավճար հատկացվելու պայման նախատեսվելու դեպքում ընտրված մասնակիցը նախապես պատվիրատուին է ներկայացնում կանխավճարի ապահովում՝ կանխավճարի չափով, բանկային երաշխիքի ձևով: Կանխավճարի մարման կարգը սահմանվում է պայմանագրով:

8.7 Եթե այլ բան նախատեսված չէ պայմանագրով, ապա պայմանագրի կամ կանխավճարի ապահովումը վերադարձվում է այն ներկայացնողին պայմանագրի կատարման ավարտից հետո՝ ոչ ուշ, քան հինգ աշխատանքային օրվա ընթացքում:

9. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿՆՔՈՒՄԸ

9.1 Պայմանագիրը կնքվում է հանձնաժողովի որոշման հիման վրա սահմանված կարգով ընտրված մասնակցի հետ:

9.2 Ընտրված մասնակցի հետ պայմանագիր կնքվում է, եթե՝

- վերջինս սույն հրավերի 8-րդ կետով սահմանված կարգով ներկայացնում է պայմանագրի և(կամ) կանխավճարի ապահովում:
- անգործության ժամկետում որևէ մասնակից չի բողոքարկում պայմանագիր կնքելու մասին որոշումը: Եթե նշված անգործության ժամկետի ընթացքում որևէ մասնակից սահմանված կարգով բողոքարկում է պայմանագիր կնքելու մասին որոշումը, ապա պայմանագրի կնքման՝ սույն հրավերով նախատեսված ընթացակարգը հետաձգվում է մինչև բողոքի վերաբերյալ որոշման ընդունումը:

9.3 Ընտրված մասնակիցը հայտարարվելուց հետո, երկու աշխատանքային օրվա ընթացքում Պատվիրատուն ծանուցում է ընտրված մասնակցին՝ ներկայացնելով գնման պայմանագիր կնքելու առաջարկը և գնման պայմանագրի նախագիծը:

9.4 Եթե ընտրված մասնակիցը պայմանագիր կնքելու մասին ծանուցումը և գնման պայմանագրի նախագիծը ստանալուց և անգործության ժամկետի ավարտից հետո հինգ աշխատանքային օրվա ընթացքում չի ստորագրում գնման պայմանագիրը և Պատվիրատուին ներկայացնում պայմանագրի կատարման, իսկ գնման պայմանագրով կանխավճար նախատեսվելու դեպքում՝ կանխավճարի ապահովումը, ապա ընտրված մասնակիցը զրկվում է գնման պայմանագիրը ստորագրելու իրավունքից:

Այդ դեպքում Պատվիրատուն գնման պայմանագիր կնքելու առաջարկ է ներկայացնում մրցույթում երկրորդ, իսկ վերջինիս կողմից առաջարկը չընդունվելու դեպքում՝ երրորդ տեղը զբաղեցրած Մասնակցին:

10. ՄՐԳՈՒՅԹԸ ԶԿԱՅԱՑԱԾ ՀԱՅՏԱՐԱՐԵԼԸ

10.1 Մրցույթի հանձնաժողովը մրցույթը չկայացած է հայտարարում, եթե՝

- մրցույթի հայտերից ոչ մեկը չի համապատասխանում սույն հրավերի պայմաններին.
- դադարում է գոյություն ունենալ գնման պահանջը.
- ոչ մի հայտ չի ներկայացվել.
- գնման պայմանագիր չի կնքվում:

11. ԳՆՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ և (ԿԱՄ) ԸՆԴՈՒՆՎԱԾ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ ԲՈՂՈՔԱՐԿԵԼՈՒ ՄԱՍՆԱԿՑԻ ԻՐԱՎՈՒՆՔԸ և ԿԱՐԳԸ

11.1 Յուրաքանչյուր անձ ունի բողոքարկման իրավունք, եթե հայտարարում է, որ Պատվիրատուի մրցույթի հանձնաժողովի գործողությունների հետևանքով խախտվել է իր իրավունքները:

11.2 Բողոքները կարող են ներկայացվել գնումների բողոքարկման խորհուրդ՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով և ժամկետներում:

Հայտի ապահովում՝ տուժանքի հայտարարության օրինակելի ձևը.

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

« » 2019թ.

_____ (կնքման վայրը)

_____, այսուհետ

(կազմակերպության անվանումը կամ ֆիզիկական անձի ազգանունը, անունը)

«ՄԱՍՆԱԿԻՑ», ի դեմս _____, որը

(ազգանունը, անունը, հայրանունը, պաշտոնը)

գործում է _____ հիման վրա, սույնով հայտարարում է՝

1. Բաց մրցույթով գնման Մասնակիցը ներկայացնում է հայտի ապահովում՝ միակողմանի հաստատված հայտարարություն, առ այն, որ Մասնակիցը պարտավորվում է ՀՀ կենտրոնական բանկին վճարել _____ ՀՀ դրամ գումար, որպես տուժանք, եթե Մասնակիցը՝

1.1 հայտարարվել է ընտրված մասնակից, սակայն հրաժարվում է կամ բաց մրցույթի գնման հրավերով սահմանված կարգով գրկվում է պայմանագիր կնքելու իրավունքից.

1.2 խախտել է գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորություն, որը հանգեցրել է գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը.

1.3 հայտերի բացումից հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

2. Սույն Հայտարարության 1-ին կետում նշված գումարի վճարումը կատարվում է սույն հայտարարության 1.1, 1.2 և 1.3 կետերում նշված հանգամանքները ի հայտ գալու պահից 3 (երեք) օրացուցային օրվա ընթացքում:

3. Սույն հայտարարությամբ ստանձնած պարտավորության խախտման դեպքում պարտավորվում եմ, որպես տույժ յուրաքանչյուր ժամկետանց օրվա համար վճարել սույն Հայտարարության 1-ին կետում նշված գումարի 0.01 տոկոսի չափով գումար:

ՄԱՍՆԱԿՑՈՒ հասցեն, բանկային վավերապայմանները և ստորագրությունը

_____ (հասցեն)

_____ (բանկային վավերապայմանները)

_____ (ստորագրությունը)

Կ.Տ

Եթե կողմը քաղաքացի է, ապա՝

_____ (ազգանունը, անունը, հայրանունը, հասցեն, անձնագրի սերիան, ե՞րբ և ո՞ւմ կողմից է տրվել)

Ցանցային տեսագրիչ (Network Video Recorder, NVR կամ նմանատիպ)

Բնութագիր	Քանակ
<p>Video input</p> <ul style="list-style-type: none"> • Ցանցային տեսախցիկների մուտքերի քանակը ` 32 • Տեսապատկերի կետայնությունը՝ Մինչև 8 MP /8MP(4K), 6MP, 5MP, 4MP,3MP, 1080p, 720p,CIF/ • Տեսահոսքերի սեղմման ձևաչափ/Compression/ H.264, H.265 • Արձանագրությունները /Protocols/ KEDACOM,OnVIF, RTSP, • Մուտքային տեսահոսքը /Incoming Bandwidth/ 320Mbps • Տեսագրման ձևաչափ H264, H.265 <p>Live Viewing</p> <ul style="list-style-type: none"> • Լոկալ դիսպլեյ 1xHDMI, 1xVGA • Բազմաէկրան դիսպլեյ լոկալ մոնիթոր 1,3,4,9,15,16,25,36 • Օգտագործողի բազմաէկրան դիսպլեյ լոկալ մոնիթոր 1,3,4,9,12,16,20,25,30,36 • Էլեկտրոնային քարտեզ /E-MAP/ • Դիտարկում E-MAP-ում <p>Recording</p> <ul style="list-style-type: none"> • Տեսապատկերի կետայնությունը 8 MP(4K), 5MP, 3MP, 1080p, 720p,CIF • Տեսագրման ռեժիմներ Manual,Continuous,Schedule/Event • Հուսվողությունը Automatic Network Replenishment/ANR/ <p>Search&Playback</p> <ul style="list-style-type: none"> • Տեսագրության հայտնաբերման ռեժիմները Ըստ ամսաթվի, ժամի,վայրկյանի, տազնապի,շարժման • Տեսապատկերի կետայնությունը 8 MP(4K), 6MP, 5MP, 4MP, 1080p, 720p,CIF • Տեսադիտարկում/լոկալ մոնիթոր/ 4x4K@30fps / 16x1080p@30fps • Օգտագործողի տեսադիտարկում 16x4k@30fps • Սինխրոն տեսադիտարկում /լոկալ մոնիթոր/ 4x4K@30fps / 16x1080p@30fps • Դիտարկման ֆունկցիաները Արագ/դանդաղ վերարտադրում, ամբողջ մոնիթորի վրա, թվային մեծացում <p>Storage</p> <ul style="list-style-type: none"> • Ներքին կոշտ սկավառակներ 4 x 3,5" HDD / 6TB/ (32TB) • RAID RAID 0/1/5/6/10 • Պահուստային կրկնօրինակման հնարավորություն USB, Ethernet,eSATA եղանակներով <p>Audio</p> <ul style="list-style-type: none"> • Ազդանշանի սեղմման ձևաչափը G.711a/G.711u/ADPCM/G.722/ • Ազդանշանի հոսքը 32kbps - 64kbps • Ֆունկցիաները Երկկողմանի կապ <p>Alarm</p>	<p>9 հատ</p>

Ֆունկցիոնալ ահազանգ

- Շարժման հայտնաբերում, տեսաազդանշանի կորուստ, օբյեկտիվի փակում, ապաֆոկուսավորում, պահպանական գծերի խախտում, մուտք պահպանվող գոտի

Համակարգային ահազանգ

- Սարքի անջատում, կոշտ սկավառակի խափանում, IP հասցեների կոնֆլիկտ, ցանցի անջատում, հոսքի ցածր արագություն
- Ահազանգի դեպքում գործողություն Լուսանկարում/տեսագրում, ձայնային ազդանշան, Email, տեսադիտարկում 1-ին պատուհանում, տեսադիտարկում ամբողջ էկրանով

System

- Օպերացիոն համակարգ Linux
- Ինտեգրում KDM2801H-G2 VMS համակարգի հետ
- Օգտագործողի կառավարում Ադմինիստրատոր/օգտագործող
- Իրադարձությունների մատյան Օգտագործողի մուտք համակարգ, օգտագործողի գործողություն, ահազանգ, պահուստավորում, թարմացում
- Ծրագրային ապահովում NVR Station SDK

Network

- Ցանցային արձանագրությունները VSIP, TCP/IP; UDP; HTTP , FTP; DHCP; DNS; DDNS, RTP/RTCP, PPPoE,
- Դիտարկման ծրագրային ապահովում CMS(NVR Station)/WEB/iOS/Android
- Օգտագործողների քանակը 64
- Ելքային հոսքը 256Mbps
- Ֆունկցիաները NAT / Socks5/ Multiple network access/ Packet loss recovery/Auto network organizing/
- Ցանցի թեստավորում
- Hot Backup N+1

Interfaces

- Ethernet 2 x Gigabit network port, RJ45
- Video out 1 x HDMI (3840x2160), 1 x VGA (1920x1080)
- Audio In/Out 1 x RCA Line in / 1 x RCA Line out
- Control 2 x RS485
- USB 2 x USB2.0, 1 x USB3.0
- e-SATA 1 x e-SATA
- Հոսանքասնուցումը ~220Վ, 50Հց
- Աշխատանքային ջերմաստիճանը -10 ~ +50°C

Ցանցային /IP/ տեսախցիկներին

Հ/Հ	Տիպ	Բնութագիր	Քանակ
1	Արտաքին շարժական IP տեսախցիկ	<ul style="list-style-type: none"> • Կետայնությունը ≥ 2 MP • Մատրիցա 1/2.8 ” CMOS,SONY,SAMSUNG,SHARP,BOSCH,AXIS • Չգայնությունը 0.05Lux(F1.6) • Օբյեկտիվը $\geq 16X$ օպտիկական ZOOM-ով • Ինֆրակարմիր լուսադիոդով՝ 20մ հեռավորությամբ • Տեսագրման ֆորմատը H264, H265, 2 հոսք • Գիշեր-ցերեկ ֆունկցիա • Հոսանքասնուցումը POE • Համատեղելիությունը ONVIF • Հիշողության քարտի տեղադրման հնարավորություն ≥ 64Գբ • Տեսախցիկի ծագման հավաստագիր • Որակի հավաստագիր՝ օրինակ UL2802 ստանդարտին համապատասխանության վկայական կամ միջազգայնորեն ընդունված որակը հաստատող այլ փաստաթուղթ • Աշխ. Ջերմաստիճանային տիրույթը $-40 \dots 50C^{\circ}$ • Կաղապարի պաշտպանության դասը IP66 • Երաշխիքը՝ նվազագույնը 1տարի 	6 հատ
2	Արտաքին գլանաձև IP տեսախցիկ	<ul style="list-style-type: none"> • Կետայնությունը ≥ 4 MP • Օբյեկտիվը՝ վարիֆոկալ 2.8-12 մմ, էլեկտրական կառավարվող • Մատրիցա 1/3” CMOS,SONY,SAMSAUNG,SHARP, BOSCH,AXIS • Չգայնությունը 0.7Lux(F1.2) • Ինֆրակարմիր լուսադիոդով՝ 10մ հեռավորությամբ • Տեսագրման ֆորմատը H264, H265, 2 հոսք, • Գիշեր-ցերեկ ֆունկցիա • Հոսանքասնուցումը POE • Համատեղելիությունը ONVIF • Հիշողության քարտի տեղադրման հնարավորություն ≥ 64Գբ • Տեսագրանշանի անալոգային ելք /BNC/ • Տեսախցիկի ծագման հավաստագիր • Որակի հավաստագիր՝ օրինակ UL2802 ստանդարտին համապատասխանության վկայանկան կամ միջազգայնորեն ընդունված որակը հաստատող այլ փաստաթուղթ • Աշխ. Ջերմաստիճանային տիրույթը $-30 \dots +50C^{\circ}$ • Կաղապարի պաշտպանության դասը IP66 • Համապատասխանելիությունը CE կամ UL • Երաշխիքը՝ նվազագույնը 1տարի 	34 հատ

3	<p align="center">Ներքին զմբեթածն IP տեսախցիկ</p>	<ul style="list-style-type: none"> • Կետայնությունը ≥ 4 MP • Օբյեկտիվը՝ վարիֆոկալ 2.8-12 մմ, էլեկտրական կառավարվող • Մատրիցա 1/3" CMOS, SONY,SAMSUNG,SHARP,BOSCH,AXIS • Զգայնությունը 0.7Lux(F1.2) • Ինֆրակարմիր լուսադիոդով՝ 10մ հեռավորությամբ • Տեսագրման ֆորմատը H264, H265, MGPEG, 2 հոսք, • Գիշեր-ցերեկ ֆունկցիա • Հոսանքասնուցումը POE • Համատեղելիությունը ONVIF • Հիշողության քարտի տեղադրման հնարավորություն ≥ 64Գբ • Տեսաազդանշանի անալոգային ելք /BNC/ • Տեսախցիկի ծագման հավաստագիր • Որակի հավաստագիր՝ օրինակ UL2802 ստանդարտին համապատասխանության վկայական կամ միջազգայնորեն ընդունված որակը հաստատող այլ փաստաթուղթ • Աշխ. Ջերմաստիճանային տիրույթը 0 ...+40C° • Երաշխիքը՝ նվազագույնը 1տարի 	77 հատ
4	<p align="center">Ներքին, պանորամիկ IP տեսախցիկ</p>	<ul style="list-style-type: none"> • Կետայնությունը ≥ 6 MP • Օբյեկտիվը 1.6 մմ (F1.6) • Մատրիցա 1/3" CMOS, SONY,SAMSUNG,SHARP,BOSCH,AXIS • Զգայնությունը 0.01-0.001 Lux • Տեսագրման ֆորմատը H264, H265, 2 հոսք, • Գիշեր-ցերեկ ֆունկցիա • Հոսանքասնուցումը POE • Համատեղելիությունը ONVIF • Հիշողության քարտի տեղադրման հնարավորություն ≥ 64Գբ • Տեսախցիկի ծագման հավաստագիր • Որակի հավաստագիր՝ օրինակ UL2802 ստանդարտին համապատասխանության վկայական կամ միջազգայնորեն ընդունված որակը հաստատող այլ փաստաթուղթ • Աշխ. Ջերմաստիճանային տիրույթը 0 ... +40C° • Երաշխիքը՝ նվազագույնը 1տարի 	3 հատ